ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2023 թ. կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2023/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «31» հոկտեմբերի 2023թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Լիլիթ Մանուկյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝
Տիգրան Խաչատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող
Տիգրան Հակոբյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության համակարգչային ցանցի ադմինիստրատոր

հանձնաժողովի քարտուղար՝
Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի ավագ մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2023/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (27.10.2023թ.) ժամը 12:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 30.10.2023թ., ժամը 12:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	դյուրակիր համակարգիչներ	1 949 999

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի գործունեության հասցեն

	(անունը)	
1	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ	ՀՀ, Ք. Երևան, 0012, Արաբկիր, Խաչատրյան Փ.24շ, 54բն,
2	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	ՀՀ, Երևան , Կոմիտասի պող., 59/7-12
3	Ա/Ձ Լուսիա Պետրոսյան	Գեղարքունիքի մարզ, գ. Վերին Գետաշեն Բ ԹՂՄ. 7Փ.S11
4	«ՆՈԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ծարավ Աղբյուր / ԲՆԱԿԱՐԱՆ / 119 / 9/3 ԱՎԱՆ 0052 ԵՐԵՎԱՆ
5	«ԱԹԱՆԵՍՅԱՆ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	ՀՀ, Երևան, Երվանդ Քոչար 17, բն.2,
6	«Արթուր Դոնդուրմաջյան Աշոտի» ԱՁ	ՀՀ, Երևան , Քուչակ թաղ., 16/30
7	«ԴՈՆԵՌ» ՍՊԸ	ք.Երևան Գայի 51/5,

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2023/15» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ	1620000	20 %	1944000	1223000	20 %	1467600
2	«Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ	1624999	20 %	1949998.8	1239000	20 %	1486800
3	Ա/Ձ Լուսիա Պետրոսյան	1600000	20 %	1920000	1600000	20 %	1920000
4	«ՆՈԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	1625000	20 %	1950000	1625000	20 %	1950000
5	«ԱԹԱՆԵՍՅԱՆ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ	1799996	20 %	2159995.2	1799996	20 %	2159995.2

6	«Արթուր Դոնդուրմաջյան Աշոտի» ԱՁ	1999999	0%	1999999	1999999	0%	1999999
7	«ԴՈՆԵՌ» ՍՊԸ	24999999	20 %	29999998.8	24999999	20 %	29999998.8

7. Տվյալներ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1/, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը կամ Հավելված 1.3/ առկայության մասին.

«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա բոլոր փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց.***

-ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ-ին,

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Լիլիթ Մանուկյան

Անդամներ՝ _____ Տիգրան Խաչատրյան

_____ Տիգրան Հակոբյան

Քարտուղար՝ _____ Օֆելյա Ասատրյան